

Իրինա Բագատրի

## ՍՈՒՔՍԵՐՍԻԱ՝ ԵՐԿԼԵԶՈՒ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼ ԾՐԱԳԻՐ

### Համառոտագիր

Տվյալ հոդվածի նպատակն է ընթերցողին ծանոթացնել սուբմերսիոն երկլեզու կրթությունը: Սուբմերսիան երկլեզու կրթության ամենաթույլ ձևն է: Այն ընդգրկում է լեզվական փոքրամասնության այն երեխաներին, որոնք ուսումը սկսում են մեծամասնության լեզվով: Սուբմերսիան հիմնվում է այն գաղափարին, որ երեխային զցեն ջրի մեջ այնպես, որ նա լող տալ չգիտի և նա պարտավոր է լողալ որքան հնարավոր է արագ, առանց ուրիշի օգնության: Նրանց համար գոյություն չունի օժանդակում լեզվական հիմնախնդիրների և արգելքների հաղթահարման համար: Սուբմերսիայի հետ է կապված հայեցակարգը՝ «Կամ խորտակվել, կամ լող տալ»: Եթե երեխան չի սովորի մեծամասնության լեզուն, ուրեմն նա «կխորտակվի», այդ պատճառով նա պարտավոր է սովորել մեծամասնության լեզուն, այսինքն՝ սկսի «լող տալ»: Հոդվածում քննարկված են սուբմերսիայի հիմնական նպատակները և նրան ուղեկցող հետևանքները:

Երկլեզվային է այն անձնավորությունը, որն ամենօրյա կյանքում կիրառում է երկու կամ ավելի լեզու կամ բարբառ (Ֆաբրո, 1999): Աշխարհի բնակչության մեծ մասը երկլեզվային է կամ բազմալեզվային: Երկլեզվությունը, փաստորեն, ներկայացված է բոլոր երկրներում, բոլոր սոցիալական դասերում և տարիքային խմբերում: Այդ պատկերացնելու համար բավական է նույնիսկ այն փաստը, որ աշխարհում գոյություն ունի շուրջ 200 երկիր և 6800 տարբեր լեզուներ: Հեշտ է եզրակացություն անելը, բնակչության մեծ մասը երկլեզվային է (Գրոսեն, 1982):

**Երկլեզու կրթություն** տերմինը պետք է ընկալենք, որպես շատ համալիր երևույթի անչափ պարզ անվանում: Բացի այլ տարբերություններից, երկլեզու կրթությունը կարող է տարբերվել թեկուզ լեզվի

ուսումնասիրման վերջնական արդյունքի տեսանկյունից:

Այն աշակերտների համապատասխան, որոնք ուսուցման համապատասխան ձև են ընտրել, երկլեզու կրթության մեջ կարելի է տարբերել թույլ և հզոր ձևեր:

**Թույլ** երկլեզու կրթության ձևը, հատկացված է հիմնականում երկլեզու միջավայրում ապրող երեխաների համար, սակայն առավելապես ուսուցման նպատակն է միալեզվության կամ սահմանափակ երկլեզվության նվաճումը: **Հզոր** երկլեզու կրթության ձևը նպատակադրում է աշակերտի մայրենի լեզվի տիրապետման պահպանում և նրա հարստացում երկրորդ լեզվի իմացության փորձով, որպեսզի նվաճվի լրիվ երկլեզվություն՝ լեզվի տիրապետման (լսել, խոսել, կարդալ, գրել) բոլոր բնագավառներում:

Երկլեզու կրթության բաժանման տարբերվող մոտեցում է ծրագրի

նպատակներին համապատասխան դասակարգումը: Այս հատկանշով առանձնացնում են *տարանցիկ* և *սպահասնող* երկլեզու կրթության տեսակներ: Երկլեզու կրթությունը միայն կրթական հարց չէ, սոցիոմշակութային, քաղաքական և տնտեսական գործոնները նշանակալի դեր են կատարում երկլեզու կրթության ձևավորման մեջ:

Երկլեզու կրթության թույլ ծրագրերից աչքի է ընկնում սուբմերսիայի ծրագիրը և սուբմերսիան փոխհատուցման դասերի հետ մեկտեղ:

Վրաստանում երկլեզու կրթությունը և նրա անհրաժեշտությունը ընդհանրապես զուգորդվում է էթնիկական փոքրամասնությունների հետ: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները գիտակցում են, որ վրաց լեզվի լավ իմացությունը վրաց հասարակությանն ինտեգրելու հնարավորություն է: Նրանց համար վրաց լեզուն երկրորդ լեզու է, իսկ երկրորդ լեզուն այլ սոցիոլեզվաբանական կարգ է և, այսպիսով, այլ մոտեցումներ է պահանջում: Չնայած նրան, որ իրականացվել է և ներկայումս էլ իրականացվում են ծրագրեր վրացերենի, որպես երկրորդ լեզվի, ուսուցմանն աջակցելու նպատակով, վրացերենի, որպես երկրորդ լեզվի ուսուցումը, կրկին պրոբլեմային է, նույնիսկ նոր ուսումնական պլանների և դասագրքերի պայմաններում: Ուսումնական պլանների ժամային ցանցով սահմանված ակադեմիական ժամերի քանակը բավական չէ վրացերենի արդյունավետ ուսուցման համար:

Էթնիկական փոքրամասնություններով բնակեցված տարածաբջաններում վրաց լեզվի ուսուցման պատճառաբանվածությունն ավելացել է նախորդ տարիների համեմատ, ինչը հատկապես նկատվում է Քվեմո Քարթլիում: Ֆոկուս-խմբերի տվյալներով, բնակչության մի մասը պետական լեզվի ուսուցման հիմնախնդիրն աշխատում է վճռել երեխային վրացական դպրոց տանելով, թեպետ սրանից հետո նրանց երեխաների առջև կանգնում են մի շարք խնդիրներ, որոնք դեռևս հաղթահարված չեն: Իսկապես, սա լավագույն ելքը չէ.

պետական կյանքում քաղաքացիների լիարժեք կերպով ընդգրկումը նախատեսում է ինտեգրում՝ ձուլման փոխարեն: Երբ ծնողն իր զավակին դպրոց է տանում, որտեղ ուսուցումն ընթանում է մեծամասնության լեզվով, մեծ է մայրենի լեզուն մոռանալու և լեզվական և մշակութային նույնականությունը կորցնելու հավանականությունը: Բազմալեզու կամ երկլեզու կրթության ներմուծումը այս ետեսակետից առաջ արված քայլ է, քանի որ սա կուրջ և Արևմուտքում փորձարկված ճանապարհ է: Կրթության և գիտության նախարարությունը կազմել է երկլեզու կրթական ծրագրերի կանոնադրության նախագիծ: Դպրոցներին հնարավորություն է տրվում, որ իրենք ընտրեն իրենց համար ցանկալի երկլեզու կրթության ծրագիրը: Այդ պատճառով էթնիկական փոքրամասնությունների համար արդեն գոյություն ունի այլընտրանք՝ սուբմերսիա թե՛ երկլեզու կրթություն՝ հզոր ծրագրով: Տվյալ հոդվածի նպատակն է երկլեզու կրթության ծրագրերից մեկի՝ *սուբմերսիայի*, քննարկումը, նրա նպատակների և արդյունքների սահմանումը:

### *Սուբմերսիա*

Սուբմերսիոն կրթությունը կամ սուբմերսիան երկլեզու կրթության մեջ ընդհանուր առմամբ հանդիսանում է երկլեզու կրթության թույլ ծրագիր: Այս ծրագիրն ընդգրկում է այնպիսի երեխաների, որոնք փոքրամասնությունների ընտանիքներից են, սակայն կրթությունը հենց սկզբից սկսում են մեծամասնության լեզվով: Օրինակ, իսպանալեզու ամերիկացիները գնում են դպրոցներ, որտեղ ամեն տեսակ ուսումնական հրահանգներն արվում են անգլերեն: Տվյալ ծրագրի նպատակն է, որ փոքրամասնությունների երեխաները որքան հնարավոր է արագ սովորեն անգլերենը լիարժեք կերպով և կարողանան մեծամասնության լեզվով աշխատել: Ընդհանուր առմամբ, դպրոցները չեն կոչվում սուբմերսիոն, սուբմերսիա տեղ ունի այն ժամանակ, երբ փոքրամասնության

ներկայացուցիչները սովորում են մեծամասնության ներկայացուցիչների հետ:

Ամերիկայում սուբմերսիայի տեսակներից մեկն անվանում են կառուցվածքային իմերսիա, երբ ուսուցիչը մի փոքր ժամանակամիջոցում փոքրամասնության երեխաների հետ խոսում է պարզ, ընտանեկան անգլերենով, թեպետ նպատակը միևնույն է մնում է նույնը՝ մեծամասնության լեզվի արագ տիրապետում: Սուբմերսիայի հայեցակարգը կապված է ջրի մեջ իջեցնելու և լող տալու հետ, այսինքն՝ լողավազանի մոտ, երեխային այնպես իջեցնում ջրի մեջ, որ նա լող տալ չգիտի, կամ երեխան այնպիսի դասարան է մտնում, որտեղ ուսուցումն ընթանում է մեծամասնության կամ պետական լեզվով: Որպեսզի հետ չմնա ուսումնական գործընթացից, նա սկսում է լող տալ սովորել: Սուբմերսիայի կողմնակիցները գտնում են, որ եթե երեխան անընդհատ շրջապատված է մեծամասնության լեզվով, այդ դեպքում նա ավելի հեշտ կսովորի այս լեզուն: Նրանք ասում են, որ սեփական ընտանիքի լեզվի օգտագործումը միայն ուշացնում է մեծամասնության լեզվի սովորելը: Այսպիսի իրավիճակում փոքրամասնության ներկայացուցիչ երեխաների համար երեք ելք է մնում կամ պետք է խորտակվեն, կամ պետք է պայքարեն, կամ վերջ ի վերջո «լողալ» սովորեն:

### **Նպատակը**

Սուբմերսիոն կրթության համար միայն լեզվական հատկանիշն այնքան նշանակալի չէ, որքան որ քաղաքական նպատակահարմարությունը: Օրինակ՝ ԱՄՆ-ում, որտեղ միշտ կուտակված են վտարանդիների մեծ հոսքեր, սուբմերսիոն ծրագրերն ուղղված էին դեպի լեզվական փոքրամասնության լեզուների ձուլում: Նրանից հետո, երբ արձանագրվեցին խառը զանգվածներ, որտեղ խառնված էին բազմաթիվ ազգեր և նրանց լեզուներ, մտածված էր, որ նրանց միավորելն դպրոցի միջոցով, այսպես ասած բոլորին մեկ «կաթսայի մեջ եփելն», և այսպես հասնելն ընդհանուր սոցիալական, քաղաքական և տնտեսական իդեալներին: melting pot կամ մեկ կաթսայի մեջ եփելը

նշանակում է ձուլման մոտեցում լեզուների նկատմամբ և այլ լեզուների տարածմանը խանգարել: Հենց սուբմերսիան էր հանդիսանում ներդաշնակ հասարակության զարգացման նախապայման: Ընդհանուր լեզուն Ամերիկայի համար կլիներ ընդհանուր արժեքներին, վերաբերմունքներին և նպատակներին նպաստող: Մեկ լեզուն և մշակույթը սերտորեն կկապեր հասարակությունը: Անգլերեն խոսող Ամերիկյան «պատրաստվում էր» «Բաբելոնի վտանգի համար»:

Ջուզահեռ շարժում էր ընթանում Մեծ Բրիտանիայում 1950-ական թվականներին, որտեղ բոլոր քաղաքային բնակավայրերում ապրող ազգային և լեզվական փոքրամասնությունների ներկայացուցիչները ընդգրկվում էին սուբմերսիոն ծրագրի մեջ:

### **Սուբմերսիան հարուցող գործոնները**

Սուբմերսիայի դեպքը բնորոշ է այնպիսի միջավայրին, որտեղ ընթանում են արագ սոցիալական փոփոխություններ և սոցիալական խառնաշփոթ է: Այս վիճակում հանդիպում ենք իմիգրանտների խմբերի: Երեխաները դառնում են երկլեզվային վաղ հասակում, թեպետ այս երկլեզվությունը տարանցիկ է և անցումային, քանի որ պետական և դպրոցական լեզուն փոխարինում են ընտանեկան լեզվին: Երեխաների միալեզու դառնալու պատճառը բարձր կարգավիճակ ունեցող լեզվի (պետական, մեծամասնության) յուրացումն է: Մեքսիկացի վտարանդիների մեջ, որոնք ապրում են Միացյալ Նահանգներում, տարածված է հետևյալ միտումը. տվյալ վտարանդիների երկրորդ սերունդը հանդիսանում է երկլեզվային մայրենի լեզվից և անգլերենից, իսկ երրորդ սերունդը ներկայացված է միալեզվայինների տեսքով: Անգլերենը, որպես բարձր կարգավիճակ ունեցող լեզու, նպաստում է այս փաստին: Շատ քիչ ռեսուրս գոյություն ունի նրա համար, որ վերականգնվի, զարգանա մայրենի լեզուն: Վտարանդի ծնողները բարձր մակարդակով են գիտակցել անգլերենի կարգավիճակը և հեղինակությունը, այդ պատճառով նրանցից ոմանք չեն խրախուսում իրենց երեխաներին, որ

ուսումնասիրեն իրենց բնիկ, մայրենի լեզուն: Ավելին, երեխաները մոտավորապես երեք տարեկանից դառնում են բարձր կարգավիճակով լեզվի, այսինքն՝ անգլերենի, իմացողներ, և նրանց մոտ, հնարավոր է, նույնիսկ ամոթի զգացում ձևավորվի, երբ իրենց ծնողները խոսում են մայրենի լեզվով, իսկ այս փաստն ավելի է նվազեցնում լեզվի կիրառությունը:

Լեզուները, որոնք պատկանում են բարձր և ցածր հեղինակության կարգին, տարբեր նպատակներ և գործառնություններ ունեն: Բարձր հեղինակություն ունեցող լեզուն պայմանականորեն անվանենք „**H**“, այն հիմնականում կիրառում են պաշտոնական տեքստերի ժամանակ կառավարական մակարդակում, կրոնում, բարձր մշակություն: Հիմնականում տվյալ բարձր հեղինակություն ունեցող լեզուն ուսուցանվում է ավագ տարիքում, ընտանիքից հեռու: Ի տարբերություն դրա, ցածր կարգավիճակ ունեցող լեզուն („**L**“), կիրառվում է ամենօրյա կյանքում, ընտանիքում խոսելու համար, ընկերների հետ հարաբերության ժամանակ, թեպետ, պարզ է, որ բարձր կարգավիճակ ունեցող լեզուն միանշանակորեն սահմանում է կարիերային հաջողությունը, իսկ **L**-ի կիրառությունն, ընդհակառակը, մատնանշում է ցածր սոցիալական կարգ, այս լեզվով խոսելը կարծես մարդուն դարձնում է հասարակության կողմից դուրս մղված: Հաճախ բարձր հեղինակություն ունեցող լեզվով խոսողները չեն ընդունում ցածր կարգավիճակի լեզվով խոսողներին: Իսկ սա առաջացնում է մերժվելու վախ, և նրանք աշխատում են այլևս չխոսել այս լեզվով: Նշված բարձր-ցածր կարգավիճակով կարող ենք խոսել նաև մեծամասնության և փոքրամասնության լեզուների տեսանկյունից: Պարզ է, այն փաստը, որ այսպիսի վերաբերմունքի հետևանքով հաճախ փոքրամասնությունների ներկայացուցիչներն իրենք կանեն սուբմերսիոն ծրագրերի ընտրություն նրա վախից, որ չմնան սոցիումից դուրս: Թեպետ, կխոսենք նաև սուբմերսիայի արդյունքների մասին:

### **Արդյունքներ**

Որոշ երեխաներ հաղթահարել են սուբմերսիայի ծրագիրը, ոմանք զարգացրել են չորս հիմնական կարողություններ լեզվից (գրել, լսել, խոսել և կարդալ), թեպետ աշակերտների մեծ մասի համար շատ խնդիր մնաց չվճռած և նրանց համար սուբմերսիան լի էր սթրեսով:

Դասն այլ լեզվով լսելու համար անհրաժեշտ է խիստ կենտրոնացում, և երեխայի կողմից լսած բառերի վերծանումը հոգնեցուցիչ գործընթաց է: Կարող է երեխան դժվարանա ընկալել լսած բառերը և տեքստից չկարողանա դուրս բերել իմաստ: Չնայած նրան, որ որոշ երեխաներ հաջողակ են նույնիսկ սուբմերսիոն ծրագրերի ժամանակ, կան երեխաներ, որոնք մնում են անհաջողակ և չեն կարողանում ընդունվել բարձրագույն դպրոց: Բացի այդ, հաճախ ի հայտ են գալիս հոգեբանական և հուզական հիմնախնդիրներ, երեխաներն այլև չեն կարողանում անել իրենց նույնականացում, ինքնաիրացում ... Սակայն պետք է նշել նաև, որ սուբմերսիան ամենաարագ ճանապարհն է մեծամասնության լեզուն սովորելու համար:

### **Եզրակացություն**

Պոզիտիվիզմի ներկայացուցիչ Լյուդվիգ Վիտգենշտեյնը գրում է. «Ինձ համար հասկանալի լեզվի սահմանները, միևնույն ժամանակ, իմ սահմաններն են: Ես այնքանով և միայն այնքանով եմ հասկանում տիեզերքը, որքանով որ հասկանում եմ այս տիեզերքի ատոմար փաստերը նկարագրող նախադասությունների միասնականությունը, այսինքն՝ լեզուն: Այդ պատճառով մարդկային ճանաչողության նպատակն է հասկանալի դարձնել ոչ թե տիեզերքը, այլ այն լեզուն, որում այս տիեզերքի փաստերն են ներկայացված: Այս, այսպես ասած, փիլիսոփայական շեղումն անհրաժեշտ եղավ, որպեսզի ավելի խորը թափանցեինք լեզվի էության և նշանակության մեջ՝ մարդու գոյության, զարգացման և ճանաչողության համար: Ամեն ժողովրդի մշակութային գոյության մեջ մեծ նշանակություն է շնորհվում նրա մայրենի լեզվին: Պարզ է, երբ ազգային և լեզվական փոքրամասնության ներկայացուցիչներն իրենց

կամքով թե օբյեկտիվ պատճառներով ընտրում են սուբմերսիոն ծրագրերը, նրանք ստիպված են լինում հրաժարվել իրենց նույնականությունից, գործ ունենք ձուլման հետ:

Վրաստանը բազմազգ երկիր է, որտեղ պետական կամ վրաց լեզուն մոտավորապես բնակչության 13%-ի համար չի հանդիսանում մայրենի լեզու: Փոքրամասնության ներկայացուցիչները հնարավորություն ունեն կրթություն ստանալու մայրենի լեզվով և սովորելու վրացերենը, որպես առարկա, սա նրանց սահմանափակում է լիարժեք ինտեգրման գործընթացում, քանի որ վրաց լեզվի լիարժեք ուսանումն անհնար է պատկերացնել փոքրամասնությունների դպրոցներում, երկրորդ ելքն է՝ գնալ պետական դպրոցներ և ընդհանուր կրթություն ստանալ պետական լեզվով (սուբմերսիա):

Վրաստանում ևս արձանագրված է միտում, երբ հասարակության մեջ իրեն հաստատելու նպատակով, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների աշակերտների որոշակի տոկոս գնում է մեծամասնության դպրոցներ: Բնականաբար, նրանց դեպքում ևս տեղ կգտնեն սուբմերսիայի ինչպես դրական, այնպես էլ բացասական հետևանքները: Ստացած հիմնախնդիրներից կարող ենք առանձնացնել հետևյալները.

- 1) ծնողները չգիտեն վրացերեն և տարրական դասարաններում չեն կարողանում օգնել իրենց երեխաներին դասերը պատրաստելիս,
- 2) քանի որ ոչ վրացալեզու երեխաները չեն հասկանում պետական լեզուն, ուսման մեջ հետ են մնում մյուս վրացի աշակերտներից, իջնում է նրանց ինքնագնահատումը,
- 3) քանի որ այս երեխաների մոտ ուսուցիչն ունի ոչ վրացի երեխաների համեմատ ակադեմիական առաջադիմության վատ արդյունք, ստիպված է լինում իջեցնել պահանջներն աշակերտների նկատմամբ, ինչը նույնպես բացասական ազդեցություն է ունենում ամբողջ դասարանի առաջադիմության վրա,
- 4) մի շարք դեպքերում ուսուցիչները չգիտեն տեղական համայնքի լեզուն և դժվարանում են կապ հաստատել ոչ վրացալեզու երեխաների հետ:

Պարզ է, որ երբ պետությունը չունի երկլեզու կրթության ծրագրերի հզոր ռեսուրս, համեմատաբար պարզ էլք է թույլ ծրագրի մեջ ընդգրկվելը, կամ սուբմերսիան ընտրելը: Սա տեղի է ունենում բնականաբար, քանի որ ծնողը

համարում է, որ միակ ելքը իր երեխայի լավ ապագայի համար պետական/մեծամասնության դպրոց տանելն է:

Այսպիսի դեպքում ելք է հանդիսանում հարստացնող/ հզոր երկլեզու կրթական ծրագրերին օժանդակումը, ինչն ապահովում է ինչպես փոքրամասնությունների համար մայրենի լեզվի պահպանում, այնպես էլ մեծամասնության լեզվի տիրապետում, աշակերտների կոգնիտային զարգացում և պետության մեջ ինտեգրման հեշտացում: Ըստ *Վիգորսկու*, հենց այս լեզուն է հանդիսանում գլխավոր գործիքը կոգնիտային գործընթացներում և երկու տարբեր լեզուների կիրառությունը կավելացնի անհատի կոգնիտային հնարավորությունները (*Վիգորսկի, 1962*):

Բնակչության մեջ երկլեզու կրթության հետ կապված տրամադրվածությունը փոխված է դրական ուղղությամբ, թեպետ այս բարեփոխման նկատմամբ որոշակի վախը և զգուշությունն ակնհայտ է, առանձնապես ուսուցիչների կողմից: Համապատասխանաբար, կարևոր է, բազմալեզու կրթական ծրագրերի հետ կապված, կադրային փոփոխությունների պարզությունը: Այդ պատճառով անհրաժեշտ են սիստեմային գործողություններ, մասնավորապես, եղած կադրերի վերապատրաստում և համալսարանական ծրագրերում բազմալեզու կադրերի պատրաստման կազմակերպում: Հետազոտողները համարում են, որ երեխան լեզուն կարող է յուրացնել բնական միջավայրում, համապատասխանաբար, անչափ կարևոր է երեխային ընդգրկել խաղի վրա հիմնված ակտիվությունների մեջ (*Խրոմսկի, 1965, Լենենբերգ, 1967*): Միակ մարդը, ով կարող է աշակերտների համար ստեղծել բնական միջավայր, ուսուցիչն է:



**ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Encyclopedia of bilingual Education,  
2008, By Josué M. González;

Encyclopedia of bilingualism and bilin-  
gual education, Volume 1997

By Colin Baker, Sylvia Prys Jones

Երկլեզու կրթության և երկլեզվության  
հիմունքները, Կոլին Բեյքեր, չորրորդ  
հրատարակում, 2010

Երկլեզու կրթություն, սեղանի գիրք  
ուսուցիչների համար:

Ն.Կվարացիսելիա. «Մարդը և  
աշխարհայեցողությունը», Սոխումի,  
2001:

Alfredo Ardila, Elian Ramos (2007)  
“Speech and Language Disorders in Bi-  
linguals.” *Miami, Florida, Usa*

Ինչ է երկլեզու կրթությունը և  
երկլեզվությունը, Ինա Դրովիետե, ԼՀ  
պրոֆեսոր, սոցիոլեզվաբան: